ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՆԴԵՊ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1919-1920 ԹԹ.)

Բանալի բառեր *– Աբրահամ Գյուլխանդանյան, Հայաստանի Հանրապետություն, ՀՅԴ, ՆԳՆ, մամուլ, թերթ, գրաքննություն, վերահսկողություն*

Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության առաջին իսկ օրերին կառավարությունը հայտարարեց ժողովրդավարական մոտեցումներ որդեգրելու մտադրության մասին: Այսպես՝ իրենց ղեկավարած կառավարությունների հայտագրերը ներկայացնելիս ՀՀ վարչապետներ Հովհաննես Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանը Հայաստանի խորհրդարանի համապատասխանաբար 1918 թ. օգոստոսի 6-ի և 1919 թ. օգոստոսի 10-ի նիստերի ժամանակ հայտարարեցին ՀՀ տարածքում դավանանքը, խոսքը և քաղաքացիական մյուս ազատությունները հարգելու մասին[1]: ՀՀ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ կառավարող Հ. Յ. դաշնակցության «Զանգ» պաշտոնաթերթի խմբագրականում ևս հստակ նշվում էր խոսքի ազատությունը չսահմանափակելու անհրաժեշտության մասին[2]: Այդուհանդերձ, ՀՀ իշխանություններն ու իշխող կուսակցությունը միշտ չէ, որ հետևում էին հայտարարած պարտավորություններին:

ՀՀ կարճատև գոյության շրջանում հրատարակվել է շուրջ վեց տասնյակ պարբերական (թերթեր, ամսագրեր), որոնց զգալի մասը մեկ կամ մի քանի համար հրատարակվելուց հետո փակվել է ֆինանսական խնդիրների պատճառով և կամ ՀՀ իշխանությունների հրահանգով[3]:

Ըստ 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհրդի հաստատած օրենքի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործելու էին նախկին Ռուսական կայսրության օրենքները՝ Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի և Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով հանդերձ[4]: ՀՀ-ն չհասցրեց մամուլի վերա-

---

[1] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2009, էջ 16, 590:

[2] «Զանգ», 4 ապրիլի 1919, թիվ 38:

[3] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 3-4:

[4] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երևան, 1998, էջ 22:

բերյալ օրենք ընդունել՝ չնայած մի քանի անգամ այդ խնդիրը բարձրացվել էր: Այս ոլորտը կարգավորվում էր Համառուսաստանյան Ժամանակավոր կառավարությունից ժառանգված օրենսդրությամբ:

Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք մամուլը և ընդհանրապես հրատարակչական գործը գտնվում էին ներքին գործերի նախարարության իրավասության ներքո: ՀՀ կառավարության անունից ՆԳՆ-ն հարաբերություններ էր պահպանում տպարանների և թերթերի խմբագրությունների հետ, հրահանգներ տալիս նրանց, թույլատրում կամ կասեցնում մամուլի միջոցի հրատարակությունը, գրքերի տարածումը: Մամուլին առնչվող խնդիրները կանոնակարգելու, անհրաժեշտ հրահանգներ տալու նպատակով նախարարությունը թերթերի խմբագիրների մասնակցությամբ պարբերաբար խորհրդակցություններ էր կազմակերպում[1]: Հանրապետության անկախության առաջին ամիսներին (ընդհուպ 1919 թ. գարունը) պետության կողմից մամուլի նկատմամբ վերահսկողություն և գրաքննություն իրականացնելուն առնչվող ակնառու փաստեր մեզ հայտնի չեն: Սովի և զանգվածային մահացության այդ ժամանակաշրջանում ՀՀ իշխանությունները նման հարցերի ուշադրություն դարձնելու ժամանակ չունեին: Իրադրությունը, սակայն, փոխվեց Հայաստանի Հանրապետության ներքին իրավիճակի կայունացմանը զուգընթաց և հատկապես 1919 թ. հունիսի 21-23-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական շրջանում, երբ քաղաքական կուսակցությունների միջև ակտիվ պայքար սկսվեց:

Արխիվային փաստաթղթերի ու մամուլի հոդվածների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում մամուլի նախնական գրաքննություն չէր իրականացվում: Ճիշտ է, 1919 թ. երկրորդ կեսից զինվորական նախարարությունն ուներ ռազմական գրաքննիչ, որի գործառույթն էր մամուլում ռազմական գաղտնիքների տպագրությունը վերահսկելն ու արգելելը, այդուհանդերձ վերջինիս լիազորությունները սահմանափակ էին, քանի որ նա թերթերի խմբագրությունների վրա ազդելու իրական լծակներ չուներ: Խմբագրություններն անտեսում էին բանակին առնչվող նյութերը մինչև հրատարակելը ռազմական գրաքննիչին ներկայացնելու առաջարկը: Ուստի վերջինին մնում էր արձագանքել արդեն տպագրված հոդվածներին[2]: Կարող ենք փաստել միայն հետգրաքննության գոյությունը, այն էլ՝ վերապահությամբ: Այդուհանդերձ, ՀՀ-ում մամուլի նկատմամբ իրականացվում էր փաստացի պետական վերահսկողություն: Դա նկատելի էր մասնավորապես 1919 թ. գարնանից սկսած: Այն առավել մեծ չափեր ընդունեց 1920 թ. մայիսյան ապստամբության շրջանում և հաջորդ ամիսներին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 131, 137, «Հառաջ», 3 հոկտեմբերի 1920, թիվ 215, «Ժողովուրդ», 28 նոյեմբերի 1920, թիվ 196:

[2] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 58 շրջ.:

Կատարված ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացնելով՝ հանգել ենք այն եզրակացության, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունում մամուլում տպագրված նյութերը «խնդիրներ են առաջացրել» երկու դեպքում. երբ բացահայտել են պետական կամ ռազմական գաղտնիքներ և կամ քաղաքական տեսակետից անցանկալի են եղել ՀՀ իշխանությունների կամ Անտանտի ներկայացուցիչների համար[1]: Արդյունքում՝ նախազգուշացվել են թերթերի խմբագրությունները, իսկ որոշ մասի տպագրությունն ուղղակի դադարեցվել է: Դրանք հիմնականում բոլշևիկյան կամ բոլշևիկամետ պարբերականներ են եղել:

Ստորև առաջին անգամ հրապարակվող փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) թիվ 199 (Հայաստանի Առաջին Հանրապետության նախարարների խորհուրդ) և թիվ 201 (Հայաստանի Առաջին Հանրապետության ներքին գործերի նախարարություն) ֆոնդերից: Դրանք տպագրվում են բնագրի լեզվով և ժամանակակից ուղղագրությամբ, հավելումները նշել ենք ուղղանկյուն փակագծերում: Հիմք ընդունելով փաստաթղթերի իմաստային կապը՝ հերթականությունը սահմանելիս միշտ չէ, որ պահպանել ենք ժամանակագրական սկզբունքը:

Փաստենք, որ Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք մամուլի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականությունը հնարավոր չէ հետազոտել առանց ՀՀ պառլամենտի և կառավարության նիստերի արձանագրություններն ու որոշումներն ուսումնասիրելու[2]: Կարևոր հիշատակումներ կան նաև ժամանակի մամուլում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

1

[9-19] սեպտեմբերի 1919 թ.[3]
N 10127

Ներքին գործոց մինիստրի[4] հրամանի համաձայն խնդրում եմ շուտով հաղորդել, թե Ձեր թերթի N 100, սեպտեմբերի 9-ին զետեղված «Գերագույն

---

[1] Մանրամասն տե՛ս **Սուքիասյան Հ. Կ.**, Մամուլի պետական վերահսկողությունը և գրաքննությունը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.) //«ԼՀԳ», 2015, թիվ 3, էջ 63-77:

[2] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2009, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2014

[3] ՀՀ ներքին գործերի նախարարության գրությունը «Ժողովուրդ» թերթի խմբագրությանը: Թվագրվում է ըստ բովանդակության և ելից համարի:

[4] ՀՅԴ նշանավոր գործիչ Աբրահամ Գյուլխանդանյանը 1919 թ. օգոստոսից մինչև 1920 թ. մայիսը ՀՀ ներքին գործերի նախարարն էր:

կոմիսար գնդապետ Հասկելի առաջարկը Հայաստանի կառավարությանը» հոդվածի տեղեկությունը ով է Ձեզ հաղորդել, կամ որտեղից եք ստացել այդ տեղեկությունը[1]:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 125: Թողոն: Մեքենագիր:

2

10 հոկտեմբերի 1919 թ[2].
N 11639
Երևան

Военный министр[3] просит сделать соответствующее указание редакциям газет и типографиям, прося вместе с тем сообщить ему Ваши соображения по вопросу о необходимости издания закона о печати.

Приложение: переписка на 5 листах.

Врид. Начальника военного штаба, причислен. к Генштабу, полковник (подпись)
Начальник отделения, военный чиновник (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 147: Բնագիր: Մեքենագիր:

3

28 սեպտեմբերի 1919 թ[4].
N 1172
Ալեքսանդրապոլ

Мною неоднократно замечено, что печать, не считаясь ни с чем, оглашает публике сведения, составляющие военную тайну.

Представляя при сем рапорт командира броневика «Азатамарт», ответ редакции газеты «Шираки ашхатавор»[5] на мой запрос и N 189 газеты «Нор аш-

---

[1] Մինչ այդ ՀՀ պառլամենտի փակ նիստում քննարկվել էր Հայաստանում Դաշնակից երկրների գերագույն հանձնակատար, ամերիկյան բանակի գնդապետ Ուիլյամ Հասկելի առաջարկը՝ ամերիկացի գեներալ-նահանգապետի ենթակայության ներքո Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներից «չեզոք գոտի» ստեղծելու մասին:

[2] ՀՀ զինվորական շտաբի գրությունը Ներքին գործերի նախարարին:

[3] 1919 թ. մարտից մինչև 1920 թ. ապրիլը ՀՀ զինվորական նախարարը գեներալ Քրիստափոր Արարատյանն էր:

[4] Ալեքսանդրապոլի կայազորի հրամանատարի զեկուցագիրը ՀՀ զինվորական նախարար Ք. Արարատյանին:

[5] ՀՅԴ Շիրակի կենտրոնական և Ալեքսանդրապոլի տեղական կոմիտեների պաշտոնաթերթը, որը հրատարակվել է Ալեքսանդրապոլում 1919-1920 թթ.:

хатавор»[1], прошу Ваше распоряжение о запрещении прессе сообщать подобные сведения.

Приложение: Упомянутая переписка за NN 586, 8 и N 189 газ. «Нор аш-хатавор».

[Начальник гарнизона г. Александрополя], генерал-майор: П. Хачатурян
Гарнизонный адъютант, поручик (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 149: Բնագիր: Մեքենագիր:

4

20 սեպտեմբերի 1919 թ[2].
N 586
Ալեքսանդրապոլ

Прошу В[аше] распоряжение, о принятии мер против того, чтобы не сообщались путем печати сведения о ходе работ [на] постройке броневого поезда, как …[3] с. ч. в газете «Շիրակի աշխատավոր» за N 66.

Капитан (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 151: Բնագիր: Մեքենագիր:

5

26 սեպտեմբերի 1919 թ[4].
N 8
Ալեքսանդրապոլ

Ի պատասխան Ձեր թվիս սեպտեմբերի 24-ի, N 1140 գրության, պարտք ենք համարում հայտնել, որ «Շիրակի աշխատավոր»-ի N 66-ում տպված «Բրոնևիկ»-ի շինելու լուրի[5] մեջ չկա նրա «Ազատամարտ» անունը, իսկ լուրը խմբագրությունը քաղել է «Նոր աշխատավոր» թերթի N 189-ից, որը ուղարկվում է Ձեզ՝ համեմատելու համար:

---

[1] ՀՅԴ Վրաստանի և Թիֆլիսի կոմիտեների պաշտոնաթերթը, որը հրատարակվել է Թիֆլիսում 1919-1920 թթ.:

[2] «Ազատամարտ» զրահագնացքի հրամանատարի զեկուցագիրն Ալեքսանդրապոլի կայազորի հրամանատար Պ. Խաչատրյանին

[3] Փաստաթուղթը վնասված լինելու պատճառով երկու բառ չի ընթերցվում:

[4] «Շիրակի աշխատավոր» թերթի խմբագրության գրությունը Ալեքսանդրապոլի կայազորի հրամանատարին:

[5] Ահա թերթում տպագրված հաղորդագրությունը. «… Այդ նույն մասնագետները պատրաստել են երկու խիստ կարևոր բրոնևիկ, որ պատիվ կարող է բերել նրանց»:

Այդ հոդվածը 3-րդ երեսում է և շրջգծված:

Ի. տ. խմբագրի (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 150: Բնագիր: Ձեռագիր:

6

8 հոկտեմբերի 1919 թ[1].
N 6871
Երևան

Начальник Гарнизона гор. Александрополь, представляя N 189 издающейся в Тифлисе газеты «Нор ашхатавор», в коей помещено сведение о постройке в Армении двух броневиков, каковое сведение, в свою очередь, было перепечатано в издающейся в Александрополе газете «Шираки ашхатавор», просить запретить прессе сообщать подобные сведения.

Принимая во внимание, что печатание в газетах составляющих военную тайну сведений проистекает вследствие отсутствия у нас определенного и ясно выраженного закона о печати, а также отсутствия перечня вопросов и сведений, не подлежащих оглашению в периодической печати, каковой перечень обычно объявляется под страхом судебной ответственности, редакторам газет полагал бы:

1. Просить Министра внутренних дел предложить редакции газеты «Шираки ашхатавор» воздержаться в будущем от сообщений, имеющих характер военной тайны, сведений, о том же попросив и редакцию Тифлисской газеты «Нор ашхатавор».

2. Просить его же в спешном порядке выработать законопроект о печати[2] и внести его на рассмотрение Парламента.

3. Впредь до издания означенного закона составить перечень вопросов, составляющих военную тайну, каковой перечень разослать всем редакциям периодических печатей.

Чин[овник] военного времени (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 148: Բնագիր: Մեքենագիր:

---

[1] ՀՀ ներքին գործերի նախարարության ռազմական ժամանակների պաշտոնյայի զեկուցագիրը:

[2] Նման օրինագիծ այդպես էլ չպատրաստվեց:

7

19 սեպտեմբերի 1919 թ[1].
N 5[2]
Երևան

Доношу, что газетой «Социалист-революционер»[3] от 18-ого с./сентября напечатана статья «Сурмалинская трагедия», в которой член Парламента г-н [Аршам] Хондкарян[4], трактуя о положении вещей в Сурмалинском уезде, очень отрицательно отзывается о Сурмалинском отряде, считая его совершенно деморализованным и способным только на грабежи и убийства мирного населения, а не на борьбу с неприятелем. В статье этой между прочим указывается и на то обстоятельство, что обо всем этом знала высшая Военная Власть.

Предупредить печатание подобных статей я не имею возможности, т. к. у нас нет предварительной цензуры, а предложение мое присылать мне все подлежащия печати сведения военного характера на просмотр редакцией не исполняется.

Прошу редакцию газеты «Социалист-революционер» привлечь за печатание вышеназванной статьи к ответственности.

Номер этой газеты при сем прилагаю (N 19).

Штабс-капитан (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 58 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

8

22 սեպտեմբերի 1919 թ[5].
N 622c

В прилагаемом при сем N 19 от 18-ого сентября газеты «Социалист-революционер» член Парламента [А.] Хондкарян поместил статью, за своей подписью, о Сурмалинских событиях.

В этой статье г. Хондкарян рисует состояние войсковых частей, действовавших в этом районе, в таком виде, что может служить материалом для иностранной разведки.

---

[1] Զինվորական գրաքննիչի զեկուցագիրը Գլխավոր շտաբի պետին:

[2] Փաստաթղթի ելից համարից կարելի է եզրակացնել, որ զինվորական գրաքննիչի պաշտոնը նոր էր ստեղծվել:

[3] Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռ) կուսակցության Հայաստանի կոմիտեի պաշտոնաթերթը, որը հրատարակվել է Երևանում 1919-1920 թթ.:

[4] Հայոց ազգային խորհրդի անդամ (1917-1918 թթ.), այնուհետև ՀՀ առաջին (1918-1919 թթ.) և երկրորդ (1919-1920 թթ.) խորհրդարանների պատգամավոր, հայ սոցիալիստ-հեղափոխականների ղեկավարներից էր, որը հայտնի էր իր ընդդիմադիր կեցվածքով: 1920 թ. նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 2-ը եղել է ՀՀ արդարադատության նախարարը: 1921 թ. փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտությունից հետո մեկնել է արտասահման:

[5] ՀՀ զինվորական շտաբի գրությունը Ներքին գործերի նախարարությանը:

Имея в виду, что газета эта имеет распространение вне пределов Армении и сведения о части наших войск станут достоянием наших противников, Военный министр просит сделать соответствующее распоряжение о предупреждении воздержаться от помещения подобных статей.

Относительно же существа статьи по части, касающейся военнослужащих, произведено дознание и направлено Прокурору Суда для привлечения виновных к ответственности.

Приложение: переписка на одном листе и газета N 19.

Врид. начальника [военного] штаба, перечисл. к генштабу полковник
(подпись)
Врид. начальника отделения Ч. В. В. (подпись)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 57 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

9

23 սեպտեմբերի 1919 թ[1].
N 10359

Ներքին գործոց մինիստրը կարգադրեց հայտնել Ձեզ, որ Ձեր թերթի 19 համարում զետեղված «Սուրմալվա ողբերգությունը» վերնագիրը կրող հոդվածը յուր մեջ պարունակում է կտորներ, որոնք 1) Վիրավորական են զորքի և նրա հրամանատարների արժանապատվության համար, 2) Զինվորական գաղտնիքներ են և չպիտի հրատարակվեին:

Այդ պատճառով Ներքին գործոց մինիստրն ուղարկում է Ձեզ ներկա գրավոր առաջին զգուշացումը՝ հայտարարելով, որ եթե զորքերի քանակի, տեղավորման, տեղափոխության, զինամթերքի և զորքերի դրության մասին Ձեր թերթում շարունակվեն գրվել հոդվածներ ու այնպիսի տեղեկություններ, որոնք վիրավորական կարող են լինել զինվորների և նոցա հրամանատարների համար, Ձեր թերթը կփակվի:

<u>Թյուրիմացությանց տեղիք չտալու համար առաջարկվում է Ձեզ. ա) Զորամասերի պետերի ազգանունները չհրատարակել, բ) զինվորական բնույթ կրող տեղեկությունները և հոդվածները (թեկուզ արտատպումները) նախօրոք ուղարկել զինվորական գրաքննիչին՝ նայելու</u>[2]:

Դիվանի տեսուչ
Գործավար

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 55 և շրջ.: Թողոն: Մեքենագիր:

---

[1] ՀՀ ներքին գործերի նախարարության նախազգուշական գրությունը «Սոցիալիստ հեղափոխական» թերթի խմբագրությանը:

[2] Ընդգծված պարբերությունը փաստաթղթում կապույտ գրիչով ջնջված է:

10

30 սեպտեմբերի 1919 թ[1].
N 10362

Довожу до вашего сведения, что по поводу отношения Вашего от 23 сего сентября за N 622с по приказанию Министра внутренних дел сделано 1-ое письменное предупреждение газеты «Соц[иалист] егапохакан».

Министр внутренних дел полагает, что на основании постановления Временного правительства от 14-го июня 1917 года, изданного в собрании узаконений и распоряжений Правительства, за § 1129 можно привлечь автора статьи А. Хондкаряна к судебной ответственности.

Директор канцелярии [МВД]
Делопроизводитель

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 54: Թողոն: Մեքենագիր:

11

26 սեպտեմբերի 1919 թ[2].
N 10314

Ներքին գործոց պ. մինիստրի կարգադրությունը՝ չտպել հակապետական գրություններ, այդ չի վերաբերում «Ժողովուրդ» թերթին: Կարող եք թերթը տպագրել: Այդ կարգադրությունը վերաբերում է թռուցիկներին[3]:

Ն.Գ.Մ. հատուկ հանձ[նարարությունների] կոմիսար (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 113: Բնագիր: Ձեռագիր:

---

[1] ՀՀ ներքին գործերի նախարարության «գաղտնի» նշագրումով գրությունը Զինվորական շտաբի տեսչական բաժնի դատական բաժանմունքին:

[2] ՀՀ ներքին գործերի նախարարության գրությունը «Լույս» տպարանի կառավարչին:

[3] Այս կարգադրությունն արվել էր Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարում (9-16 սեպտեմբերի, 1919 թ.) ընդունված «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևի տպագրությունից հետո, որտեղ խստորեն դատապարտվում էր ՀՀ իշխանությունների և իշխող կուսակցության՝ ՀՅԴ-ի գործունեությունը: ՀՀ ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանի կարգադրությամբ «Լույս» տպարանը ժամանակավորապես փակվեց: Սեպտեմբերի 19-24-ին ՀԺԿ-ի «Ժողովուրդ» թերթը չտպագրվեց:

12

27 սեպտեմբերի 1919 թ[1].
N 10347

Ձեր հարգելի թերթի ամսույս 24-ի և 25-ի NN 4 և 5-ում զետեղված «Վերջին կռիվները Իգդիրում» հոդվածի[2] առիթով Ներքին գործոց մինիստրությունը ստացել է Զինվորական շտաբից մի գրություն, որի մեջ հայտնվում է բողոք այդ հոդվածների բովանդակության դեմ, որովհետև նոքա վիրավորական են մեր հանրապետության երիտասարդ զորքի արժանապատվության համար:

Այդ առիթով ներքին գործոց մինիստրը հրամայեց հայտնել Ձեզ, որ անթույլատրելի է Ձեր հարգո թերթի մեջ զետեղել այնպիսի հոդվածներ, որոնք իրենց մեջ տեղեկություններ են պարունակում զորքի տեղավորման, տեղափոխության, կազմի, քանակի, գործողությունների մասին և, առհասարակ, վիրավորական կարող են լինել զորքի և նորա [հրամանատարության] արժանապատվության համար:

Հայտնելով Ձեզ վերոհիշյալի մասին՝ խնդրում եմ անել անհրաժեշտ կարգադրություն նման երևույթները չկրկնելու համար:

ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 112: Թողոն: Ձեռագիր:

13

16 հոկտեմբերի 1919 թ[3].
N 187

Սույն գրությամբ ուղարկում եմ «Սոցիալիստ հեղափոխական» թերթի N 26-ը՝ ի քննություն և տնօրինություն Ձեզ[4]:

Ներ[քին] գործ[երի] մինիստր՝ Ա. Գյուլխանդանյան

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 54, թ. 29: Բնագիր: Ձեռագիր:

---

[1] ՀՀ ներքին գործերի նախարարության գրությունը «Հառաջ» թերթի խմբագրությանը:

[2] Նշյալ հոդվածում քննադատվում էին Սուրմալուում գործող հայկական զորամասերի անկազմակերպ դրությունը, հրամանատարների սխալները, ինչը բախտորոշ եղավ շրջանի հայ և եզդի բնակչության համար՝ հանգեցնելով զանգվածային գաղթի դեպի Արարատյան դաշտ:

[3] ՀՀ ներքին գործերի նախարարի գրությունը Կառավարությանը:

[4] Թերթի նշյալ համարի անստորագիր խմբագրականում քննադատվում էր ՀՀ իշխանությունների քաղաքականությունը Զանգեզուրի հարցում, իսկ «Ձեռքերի ճարպկություն» վերնագրված հոդվածում անարգանքի սյունին էր գամվում վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը («Սոցիալիստ հեղափոխական», 12 հոկտեմբերի 1919, թիվ 26): ՀՀ կառավարությունը 1919 թ. հոկտեմբերի 14-ի նիստում լսեց ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի զեկուցումը թերթի նշյալ համարի բովանդակության վերաբերյալ, ինչն «ի գիտություն» ընդունվեց (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2014, էջ 323): Թերթի նկատմամբ պատժամիջոցներ չկիրառվեցին:

14

4 մայիսի 1920 թ[1].
N 377

Համարելով «Գյուղացու ձայն» թերթի[2] ուղղությունը հակապետական և վնասակար, որը առանձնապես արտահայտվում է նո. 3 առաջնորդողում, կուզեի իմանալ Մինիստրների խորհրդի կարծիքը հիշյալ թերթը փակելու մասին:

Սրան կից ուղարկվում է «Գյուղացու ձայն»-ի 3 համարները[3]:

Ներքին գործոց մինիստր՝ Ա. Գյուլխանդանյան

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 629, թ. 1: Արխիվային պատճեն: Մեքենագիր:

15

18 սեպտեմբերի 1920 թ[4].
N 6518

Նախարարների խորհուրդը իր սույն թվի սեպտեմբերի 17-ի նիստում, քննելով Թիֆլիսում հրատարակվող «Նոր Խոսք» թերթի[5] խնդիրը, որոշեց հանձնարարել ներքին գործոց նախարարին[6] միջոցներ ձեռք առնել՝ արգելելու Թիֆլիսում հրատարակվող «Նոր Խոսք» թերթի մուտքը Երևան:

Ի տ. Գործերի կառավարիչի
Ի տ. Դիվանի վարիչի

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 594, թ. 1: Թողոն: Ձեռագիր:

---

[1] ՀՀ ներքին գործերի նախարարի գրությունը Կառավարությանը:

[2] Շաբաթաթերթը 1920 թ. ապրիլի 19-ից հրատարակվում էր Հայաստանի աշխատավոր գյուղացիական միության կողմից: Այն խմբագրում էին ՀՀ պառլամենտի անդամ, բոլշևիկամետ Արտաշես Մելքոնյանը և բոլշևիկ գործիչ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը:

[3] ՀՅԴ Բյուրոյի և ՀՀ իշխանությունների կարգադրությամբ 1920 թ. մայիսի 7-ին թերթի 4-րդ համարի տպագրությունը դադարեցվեց, իսկ խմբագրության երկու աշխատակիցները ձերբակալվեցին:

[4] ՀՀ կառավարության գրությունը ներքին գործերի նախարարին:

[5] Այն հրատարակվում էր Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների կողմից և ուներ բոլշևիկամետ ուղղվածություն: Հրատարակվել է 1920 թ. օգոստոսի 22-ից մինչև դեկտեմբերի 13-ը՝ Թիֆլիսում:

[6] 1920 թ. մայիս-սեպտեմբերին ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանը համատեղում էր ՀՀ ներքին գործերի և ռազմական նախարարի պաշտոնը:

16

21 հոկտեմբերի 1920 թ[1].
N 7212

Մամուլի զանազան օրգաններում պակաս չեն հաճախ այնպիսի հոդվածներ կամ լուրեր, որոնք ուղղված են դաշնակիցների դեմ, ինչը որ վատ կերպով կանդրադառնա մեր պետական շահերի վրա: Որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ տրվի անցանկալի այդ երևույթին, անհրաժեշտ եմ գտնում, որ Ներքին գործերի նախարարությունը հրավիրե մամուլի և այլ նմանօրինակ պրոպագանդային հաստատությանց ներկայացուցիչների մի ժողով և տա անհրաժեշտ հրահանգները, որպեսզի զգուշանան դաշնակիցների և, ի մասնավորի, Անգլիո դեմ ուղղված գրություններ հրատարակելե:

Նախարարապետ [Հ. Օհանջանյան]
Գործերի կառավարիչ

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 159, մաս II, թ. 120: Թողոն: Մեքենագիր:

Амо Сукиасян – ***Документы о политике Первой Республики Армения (1919-1920 гг.) в отношении прессы***

В период короткого существования Первой Республики Армения было опубликовано около шести десятков периодических изданий (газеты, журналы). Проблемы, связанные с прессой, контролировались согласно законодательству Временного Всероссийского правительства. При Республике Армения пресса находилась под юрисдикцией Министерства внутренних дел. От имени правительства МВД поддерживало связь с издательствами и редакциями газет, давало указы, разрешало или запрещало публикацию органов прессы.

В Республике Армения не было предварительной цензуры, однако пресса фактически находилась под государственным контролем. Подводя итоги проделанного исследования, мы пришли к выводу, что опубликованные в прессе материалы «вызывали проблемы» в двух случаях: 1. они раскрыли государственную либо военную тайну; 2. с политической точки зрения были нежелательны для властей Республики Армения или представителей Антанты.

---

[1] ՀՀ կառավարության գրությունը Ներքին գործերի նախարար Ս. Արարատյանին: Ամենայն հավանականությամբ, այս գրության համար առիթ է եղել «Հառաջ» թերթի 1920 թ. հոկտեմբերի 17-ի համարում տպագրված «Մենք և մեր դաշնակիցները» հոդվածը (հեղինակ՝ «Դրսեցի»):

Hamo Sukiasyan – *Documents about the Policy of the First Republic of Armenia with Respect to the Press (1919-1920)*

Around sixty periodicals (newspapers, magazines) were published during the short existence of the First Republic of Armenia. Media-related issues were regulated by the legislation of the all-Russian Provisional Government. The press was under the jurisdiction of the Ministry of Internal Affairs. On behalf of the Government, the MIA maintained relationships with publishing houses and newspaper editorial offices, gave them instructions, permitted or forbade the publication of the press.

There was no preliminary censorship of the press in the First Republic of Armenia, however, actual state control towards the press was carried out. Generalizing the results of the study we have come to the conclusion that the materials printed in those days "aroused problems" in two cases – if 1) revealed state or military secrets, 2) in terms of politics were undesirable for the authorities or representatives of the Entente.